Հավելված
ՀՀ վարչապետի 2016 թ.
մարտի 31 -ի N 242 - Ա
որոշման

Ց Ա Ն Կ

«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու համար պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը	Իրավական ակտն ընդունելու առնչությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսական ապահովման աղբյուրը
1.	«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	2016 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
2.	«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	2016 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
3.	«Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին դրամական օգնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն	2016 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե

16_0242

4.	«Սահմանապահ զորքերի, ոստիկանության կամ ազատազրկման վայրերի վարչակազմի կողմից ապաստանի խնդրանքի ընդունման և այն լիազոր մարմնին փոխանցման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ արդարադատության նախարարություն	2016 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
5.	«Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխա ապաստան հայցողի, ինչպես նաև հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության կամ հաշմանդամության հետևանքով ապաստանի տրամադրման ընթացակարգի էությունն ու նշանակությունը գիտակցելու ունակություն չունեցող ապաստան հայցողի համար ապաստանի ընթացակարգի շրջանակներում ներկայացուցիչ նշանակելու կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	2016 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
6.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 19-ի N 1440-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	2016 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16_0242